

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆՆԱԳԱՐՔՈՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵԳԻՊՏՈՍ.

(Ծ-Դ-Ե-Զ և Է-Ը-Ճ)

Է.

Իսկ որ ինչ յԱղէքսանդրիա եղիլոյն
Եզգի մերոյ վէպք՝ այսչափ ունիմք հա-
ղորդիւ հասարակութեան, զի և նոքին
եղեալքն կարի համառօտք են ի քա-
ղաքին և ոչ կանուխ ժամանակաւ դաղ-
թեալք անդանօր:

Եզգ մեր յԱղէքսանդրիա են կարի սա-
կաւածիւք՝ տունք իբրեւ երեսունք և ժո-
ղովածուք յԱսիոյ գրեթէ յամենայն կող-
մանց Օսմանեան պետութեանն. թէ և
եղին ի նոսա հարուստ և երեւելի անձինք
առ իշխանութեամբ Մահմատ Ալի փա-
շային, բայց առ սակաւութեան իւրեանց
չեղև նոցա փոյթ ունել առանձին եկե-
ղիցի, և զի նախ քան զփաշայն ոչ գոյր
ի քաղաքի ա և ոչ Հայ մի յազգէ մեր-
մէ:

Պօղոս պէյ Իւսուֆեան առաջին իշ-
խան հայազգի և առաջին քան զամենայն
գործակալս փաշայութեան Ազիպտոսի,
այր այնպէս գործունեայ՝ որ զամենայն

դարձուածս կառավարութեանն ունէր ի
ձեռին որպէս ասի, իւրով խոհական ի-
մաստութեամբ, և ունէր գրեթէ յամե-
նայն թաղս և ի փողոցս քաղաքին մեծա-
մեծս կալուածս տանց և ընդարձակ զե-
տինս յընթացս իւրոյ յաջողութեան
գործոց ի քաղաքական կառավարութեան:

Ասի, թէ սոյն Պօղոս պէյ ունէր զի-
տաւորութիւն կառուցանել ազգիս՝ հո-
յակապ եկեղեցի, բայց երեւի թէ զսոյն
զիտաւորութիւն իւր ոչ կարաց յառա-
ջացուցանել՝ զուցէ առ երկիւզի՝ ի կեն-
դանութեան իւրում. միայն պարտէզ մի
մեծ ի հարաւային եզր քաղաքին գնեալ
նորա, յորում և տուն մի երկյարկեան,
զոր առ նորին կենդանութեամբ յարդա-
րին զեկեղեցի ի վերնայարկին հաճու-
թեամբ նորա և ծախիւքն, և անդ կա-
տարէին զժամերպութիւն առ Առաջնորդ-
ութեամբ Պարբէշ վարդապետի, որ
զառաջինն վարէր աստ փոխանորդութիւն
Ալիբախոս Ապիսկոպոսի Առաջնորդին Ա-
զիպտոսի Հայոց, որպէս եղաւ ի կարգ
Առաջնորդաց: — Եյսպէս սկիզբն առնու-
եկեղեցի Հայոց յԱղէքսանդրիա առաւ Ա-
զիպտոսի:

Նախ քան զայս ժողովուրդ մերազանց
չունիլով աստ սեփական եկեղեցի, զի-
մէն յեկեղեցիս Յունաց և Վփաեացն,
և ոչ իսկ գոյր նոցա քահանայ, ուստի և
հոգեւոր պէտք ժողովրդոցն կատարիւր ի
յիշեալ եկեղեցիսն. նա մանաւանդ զիչէին
աստ գերդաստանք նոցա, այլ սոսկ անձինք
վաճառականութեամբ կամ օտարութեամբ
զիպեալք աստ յերեւելի աւուրս տօնից
զիմէն յեկեղեցի մեր անդ ի Պահիրէ, և
մերթ բերէին վարդապետս անախ:

մնացած է ետքէն օրինակուածներուն մէջ աբ ա-
նանկ որ Բէշիբէն բաօր, որ իւր ըսել է և և-
թէ շէնքի համար բոսի՝ անկեան ծայրը եր հաս-
կըցնէ, տնայնամբ եէրն եղեր, որ սրբազան տեղ
կամ տաճար ըսել է և Հայերէն թարգմանութիւնն
ասոնց կարծիրը կասու գէ:

Յայսմ ժամանակի և Պօղոս պէյ նստէր ի Գահիրէ. իսկ յորժամ Մահմատ — Եւ լի փաշայ կալաւ բնակութիւն յԱղէքսանդրիա, յորում ժամանակի և ձեռն արկանէր զքաղաքն բովանդակ շքեղազարդել եւրոպական կարգօք, և զկառավարութիւն իշխանութեան իւրոյ փոխադէր ի սոյն, յայնժամ Պօղոս պէյ գորով յայնոսիկ գործս իշխանութեան, փոխադրեց և սա զբնակութիւն իւր աստ. յայնժամ և յամենայն կողմանց Հայք յաւելան անդր, լուեալ զառաքինական և զազգասէր առնն մեծի, յորմէ շնորհմարդասիրութեան տեսնէին բազումք և զբտանէին հարստութիւն, ոյր վասն ոմանք ի նոցանէ կապեալք ի շահական ծառայութիւն, մոռանային զհայրենիս իւրեանց և ամուսնանային անդ, և ոմանք ևս հանդերձ գերդաստանօք անցեալ յԱզիպատս՝ կալան տուն բնակութեան աստ յԱղէքսանդրիա:

Եյս ժամանակ էր, յորում Աիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմի Եռաջնորդ եկեալ Հայոց Եզիպատսի ի Գահիրէ, առաքէ զսպասաւոր իւր աստ զՄարաշցի Գարրիէլ վարդապետ հովուել զնորեկ ժողովուրդ մեր յԱղէքսանդրիա:

Սորա եկեալ և տեսեալ զնեղութիւն ժողովրդոցն ի մասին հոգեւոր պիտոյից կատարման, որոց վասն ի դրուես այլոց ցայն վայր դիգերէին, խորհրդակցութեամբ և ձեռնառութեամբ ուրումն Եբրահամ վարժապետի Պրուսացւոյ (որ էր ի ծառայութեան գործոց Պօղոս պէյին) խնդրէ ի նմանէ զտունն որ ի պարտիզն անդ նորա, յարդարել զայն եկեղեցի վասն ազգիս Հայոց, որպէս գրեցաք, միայն զե

ժողովուրդ մեր մի' մնացեն առանց Եստուածապաշտութեան և հաղորդութեան սրբոյ եկեղեցւոյ և եկեղեցական խորհրդոց և ի պէտս հոգեւոր հարկաց կատարման:

Եւ ահա այսու բարի զիտաւորութեամբ զայն տուն կրկնայարկ ընծայէ ազգիս մեծանուն Պօղոս պէյ, յարդարել տուն և տաճար Եստուծոյ, մինչև Տեառն յաջողութեամբ որպէս խոստացեալն է, կառուսցէ և եկեղեցին. բայց չե ևս կառացեալ նորա կատարել զայս խորհուրդ, կնքէ զկեանս իւր մեծահամբաւ այս իշխան բարեպաշտ. զորոյ զմարմինն թաղեն առ դրան մատրանն նուիրելոյ յինքնէ, կանգնելով ի վերայ արձան յիշատակի ի մարմարոնեայ քարանց, զրուագագործեալ ինչ ինչ նկարս գործոց նորա, ունելով ի շրջանակսն զիւր յիշատակաց առանց թուականի օրինակ զայս.

» Ո՞վ հողի ազգասէր Պօղոս պէյի Իւսուֆեան,

» որ զմայրն Հայաստան եւ զնորն Եզիպատս

» ի սուղ տարաժամ թողեալ վերացար,

» զայս յաւերժ յիշատակ հաշխարհիկ հանճարոյդ

» ի րոյինս դաստակերտ յազգակցացդ սիրոյ

» ընկալ և հանգիւր »:

Յայս տուն յորում եկեղեցին սուրբ Եստուածածնի անուամբ որպէս ասացաւ, ի հարաւային արեւելակողմն պարտիզին ի միջն նորա՝ է երկար քառանկիւն քսան և չորս քայլ երկայնութեամբ և երկոտասան իւրյնութիւն. ի ներքնայարկին ունի զերկուս դրուես յարեւելից և յարեւմտից հանդէպ միմեանց քառեակ աստիճանօք բարձրացեալ յերկրէ, և սալայատակ աւրարեալ զմիջոցն. ի հարաւային կողմն են սենեակք երկու. իսկ ի հիւսիսի է ճանապարհն ընդ որ ելանին ի վերնայարկ տանն:

յիկեղեցի անդր, որ յարեւմտան ձեռնի ղնեքքին յարկին՝ երկայն և կարի նեղ, և յերկուս կողմանս իւր են երկու սենեակք՝ մին ճանապարհ տաճարին, և միւսն աւանդատուն և պահարան սպասուց եկեղեցւոյն:

Այս եկեղեցի կամ մատուռն այսպէս յարգարեալ եղև ի վերջին աւուրս Առաջնորդութեան Արաիոս Ապիսկոպոսի յամին իբր 1839:

Իբրև յարգարեցաւ յիշեալս եկեղեցի, վարդապետք գտեալք ի ժամանակին վասն հովուելոյ զժողովուրդն, որպէս և յաջորդն Գաբրիէլ վարդապետ, ընակէին ի սենեակսն որք ի կողմանս եկեղեցւոյն, բայց յետ վախճանի պէյին տուն մի ևս նորա գոլով ի պարտիզին յարեւմտակողմն, որ է այժմեան Առաջնորդարանն ասացեալ, ազգականք բարեյիշատակ հանգուցելոյն Աբրահամ և Յովսէփ չլիպիք Աբրոյեան յետ վիճմանց ինչ ընծայեն զայն եկեղեցւոյն կարեկցեալ յաղքատին վիճակ մերազնեայց հանգերձ մեծ պարտիզովն, յորում է այս տուն և եկեղեցին ի յիշատակ հոգւոյ ազգակցի իւրեանց և ի կառավարութիւն եկեղեցւոյն և հոգեւորականացն տարեկան եկամտօք նոցին:

Յայս տուրս նուիրանաց իբրև ի մըշանջնաւոր կալուած եկեղեցւոյն՝ յաւելուն ազնիւ ժառանգաւորք պէյին և երկյարկեան տուն մի մեծ ի կայից նորա, որ է այժմ դպրատուն ազգիս եղեալ ի քաղաքամիջի անդ ի հնումն բաժնի մերձ ի նորն. այս տուն սակարկեալ գոլով երեք հարիւր հազար դահեկանի՝ ընդ այլ կալուածոց հանգուցելոյն, յիշեալ ժառանգորդք թողուն ի վերայ եկեղեցւոյն

կիսազնի, և ստանան զկէս բաժին գնոց: Թո՞ղ զի և բարեյիշատակ Պօղոս պէյն ի կենդանութեան իւրում եղեալ էր ի դըրամատուն փաշայու թեան տեղւոյն հարիւր հազար դահեկան ի մշտնջենաւոր հաստատութիւն եկեղեցւոյ յԱզէքսանդրիա և յապրուստ պաշտօնէից նորին, որոց պաշտօն է հովուել զփոքրիկ հօտ ժողովրդեան մեր անդ:

Այժմ պարտէզն՝ յորոյ միջի է եկեղեցին և առաջնորդարանն, է մի ի գլխաւոր կալուածոց ժողովրդեան մերոյ, տուեալ ի շահաբերութիւն ի ձեռս տեղական երկրագործաց հոգաբարձութեամբ եկեղեցւանի տեղւոյն Աւետիք անուն առն Բալուեցւոյ:

Այս եկեղեցւան ի քսան և հինգ ամադ հեռէ եկաց ի սպասաւորութիւն եկեղեցւոյս. զի է միանգամայն եկեղեցւան, լուսարար և ժամկոչ. սա միանգամ մտեալ ընդ լծով ամուսնութեան, և վաճառականութեամբ անկեալ յայս երկիր նախ քան զշինութիւն եկեղեցւոյն, յետ միանգամ վաճառաբեկ լինելոյ, դոյ աստ յԱզէքսանդրիա և մտանէ ի ծառայութիւն եկեղեցւոյն. որ և զայնոսիկ անցս կարեւորն ականատեսութեամբ պատմեաց մեզ:

Աստ ևս որպէս և ի Գահիրէ, եկեղեցական պէտք ժողովրդեանն կատարի ի ձեռն վարդապետաց, և այս ի սկզբանէ հաստատութեան աստէն եկեղեցւոյ, դուցէ ֆնացեալ յԱրուսադէմէ անտի այս սովորութիւն. յորոյ ընդհանուր վիճակս ժողովրդեան վարդապետք են կատարողք սրբազանն խորհրդոց եկեղեցւոյ. այլ աստ յԱզիպատոս ոչ ի սովորութիւնէ յաւէտ, որքան ի սակաւութենէ եկամտից եկեղեցւան:

ցւոյն, զի ոչ պահել բաւեն քահանայս
հանդերձ ծանրութեամբ ծախուց ընտա-
նեաց, բայց զուցէ և յԱղեքսանդրիա
բարձցի սովորութիւնս յետ ժամանակի,
որպէս երարձ ի Գահիրէ Գարբիէ Ե-
պիսկոպոս՝ որպէս ասացեալ եմք, վասն
անձին՝ և ոչ վասն եկեղեցական օգտի:

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՓՈԽՆՋՔ Ի ՄԵՏԵՆԵՐՓՈԹԵՆՑ.

(Ծ-Ե-Ն. Ե Ժ-Ե)

Յաղագս ծաղրոյ.

Մարդն նա եւ կեայ, զգայ եւ ինքնա-
յօժարութեամբ շարժի եւ բազկանայ
յերկուց մասանց, ի մահկանացու մարմ-
նոյ եւ յանմահ հոգւոյ:

Աստուած զմարդիկ վեհ եւ գերազանց
արարչագործեաց, զի զիւր երկնային
իմանալի գիտութիւն ի ձեռս բերել
կարացեն:

Ձքնաղագեղութիւն եւ վեհ ձեւ մար-
դոյ յաղթէ ձեւոց ամենայն կենդա-
նեաց, որք յերկիր կորակնին, զորս Աս-
տուած առ ինքն միայն հայել արար-
չագործեաց:

Ի մէջ մարդկան եւ անասնոց է այս
մեծ զանազանութիւն, զի նոքա զայն
մի միայն՝ որ ներկայ գտանի՝ զանձինս
յարմարեն, բայց մարդն գիտէ զպատ-
ճառս իրաց եւ զհետեւանս:

Բնութիւն գազանաց ետ զգածումն
եւ շարժումն, մարդկան ետ զհանճար,

որով յառաջ ընթանայ ցանկութիւն
հոգւոյ:

Ինձ այսպէս թուի ասաց Կիկերոն թէ-
մարդիկ բազում իրօք տկար եւ ստորին
են քան զգազանս, սակայն այսու իրօք
գերազանցեն զանասնութիւն՝ զի կարեն
խօսել:

Որպէս զմարդիկ հանաչեմք բանիւք՝
նոյնպէս զպղինձ ձայնիւք:

Բաղմիցս պատրաստեն մարդկան ըզ-
չար լեզուն ի վայրախօսութիւն:

Այք որպէս զգէտ զբարձրագոյն տե-
ղիս շօշափեն, որով բազում նկատողք
կատարեն զիւրեանց պաշտօն:

Որպէս աչք՝ նմանապէս եւ հոգի զին-
քեանս ոչ տեսանեն, այլ ընդ քթթել
ականց կամ ի ճնշելոյ արտասուաց եւ
ըստ պատժելոյ զայլս հեշտեալ դա-
տեմք թէ ո՞րքան է ի մարդն ցաւ կամ
երկիւղ:

Արտեւանունք պատշաճաւոր են փա-
կելոյ եւ բանալոյ զերկոսին ակունս:

Ոչ երբէք սխալին աչք եթէ ոչ հո-
գին հրամայեսցէ աչաց:

Քիթն այնպէս յարմարեալ է, իբրեւ
պարիսպ ի մէջ աչաց հաստատեալ կար-
ծի:

Բարւոք է օգտել ականջօք քան լե-
զուօք:

Քսինոկրատէս ասէ ումեմն պերճա-
խօսի, լուր զի ստանամք ի բնութենէ
զմի բերան եւ զմի ականջ:

Արիւնն ի ձեռս երակաց յամենայն
մասունս մարմնոյ տարածի:

Արիւնն ի որտէ յամենայն մասունս
մարմնոյ տարածի ի ձեռն անթիւ երա-
կաց սիւռելոց ի մասունս մարմնոյ մերոյ: